ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՌՈՇՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնք
Գ. Պռոշյան, Անդրանիկի 13

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

20.08.2024թ. Պռոշյան բնակավայր

2024 թվականի օգոստոսի 20-ին՝ ժամը 15:00-ին Նաիրի համայնքի Պռոշյանի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ հանրային բաց լսում.

Օրակարգում՝ Պռոշյան վարչական շրջանում գտնվող <<Աստղիկ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ը <<Պարոնյան>>-ի անվան մանկապարտեզ վերանվանելու վերաբերյալ հանրային քննարկումն էր:

Նիստը վարում էր Պռոշյանի վարչական ղեկավար Սևակ Գաբրիելյանը:

Վերջինս շնորհակալություն հայտնեց սփյուռքահայ բարերար՝ Միհրան Բարոնյանին Պռոշյան վարչական շրջանում գտնվող <<Աստղիկ>> մանկապարտեզի շենքը դեռևս 2008 թվականին ամբողջությամբ վերակառուցելու, իսկ 2023 թվականին նոր գույքով համալրելու համար: Խոսքում անդրադարձավ նաև, որ որպես երախտիքի և հարգանքի նշան համայնքապետարանի աշխատակազմի կողմից որոշում է կայացվել Պռոշյանի <<Աստղիկ>> մանկապարտեզը Միհրան Բարոնյանի ծնողների պատվին վերանվանել <<Պարոնյան>>-ի անվան մանկապարտեզ ՀՈԱԿ:

Նիստին ներկա էին նաև ավագանու անդամներ, համայնքապետարանի աշխատակիցներ, բնակիչներ, ՀՈԱԿ-ի տնօրեններ:

Ներկաները շնորհակալություն հայտնեցին բարերարին կատարված մեծածավալ աշխատանքի, հոգատար վերաբերմունքի համար, հույս հայտնելով, որ փոխհամագործակցային աշխատանքը կլինի շարունակական և հաջողություններ մաղթեցին հետագա ծրագրերի իրականացման համար:

Հանրային քննարկմանը ներկայացված հարցը, մանկապարտեզի վերանվանման վերաբերյալ, ներկաների կողմից արժանացավ հավանության:

Պռոշյանի վարչական ղեկավար Սևակ Գաբրիելյան